«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

"MATENADARAN"
MESROP MASHTOTS
INSTITUTE OFANCIENT
MANUSCRIPTS

Երևան, Մաշտոցի պող. 53, ☎51-30-00

Yerevan, Mashtots Av. 53, ☎51-30-00
Email: contact@matenadaran.am

ք. Երևան **2024թ մարտի 19**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱԼԵՔՍԻՄ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը ստորև ներկայացնում եմ «ԱԼԵՔՍԻՄ» ՍՊԸ-ԻՆ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը:

«ՄԱՏ-ԳՀԾՁԲ-09/24» ծածկագրով մասնագիտացված կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների /համակարգչային, պատճենահանող սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ/ ձեռքբերման ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 5-րդ կետի 5.1 ենթակետի համաձայն՝ «Ալեքսիմ» ՍՊԸ-ն ճանաչվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակից: Անգործության ժամկետի ավարտից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով ընտրված մասնակցին 09.03.2024թ. էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել էր պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը՝ առաջարկելով Ծանուցումը ստանալուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից կնքված պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները: Սահմանված ժամկետում «Ալեքսիմ» ՍՊԸ-ի կողմից ստորագրված պայմանագիրը և որակավորումները չեն ներկայացվել: Հիմք ընդունելով ընթացակարգի հրավերի 9.5

Scanned with ACE Scanner

կետը՝ հանձնաժողովը որոշել է զրկել «Ալեքսիմ» ՍՊԸ-ին պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Ելնելով վերոգրյալից գտնում եմ, որ առկա են «Ալեքսիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված հիմքերը և որոշում եմ՝ «Ալեքսիմ» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ

Ա. ԽԶՄԱԼՅԱՆ

Scanned with ACE Scanner